**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

---

***ՈՐՈՇՈՒՄ***

*<< 08 >> մայիս_ 2015թ*　　　　N 44
*ք. Եղեգնաձոր*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ ՝ (69-3.3-6 ) ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2015 թվականի մայիսի 6-ի N 379-Ա որոշումը.*

***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ***

*1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի առաջատար մասնագետի (69-3.3-6) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը՝ համաձայն հավելված 1-ի :*

*2.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի*

*1) առաջատար մասնագետների (ծածկագրեր՝ 69-3.3-4, 69-3.3-5) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի 5-րդ կետի՝*

*ա. 1-ին պարբերության <<Բաժնի մյուս առաջատար մասնագետը, Բաժնի առաջին կարգի մասնագետը>> բառերը փոխարինել <<Բաժնի առաջատար մասնագետներից մեկը>> բառերով.*

*բ. 2-րդ պարբերության <<Բաժնի մյուս առաջատար մասնագետի, Բաժնի առաջին կարգի մասնագետի>> բառերը փոխարինել <<Բաժնի առաջատար մասնագետներից մեկի>> բառերով:*

*3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:*

*Հ. ՍԱՐԳՍՅԱՆ*